

ուրախալի լուրը՝ թէ այս քաղաքս պիտի
 ժամանես եւ միւս աւելի նշանաւոր քաղաքը
 պիտի անցնիս, անասելի ուրախութեամբ
 համակուեցանք ամէնքս, թէ՛ հայերը թէ՛
 լատինները, եւ բոլորին յօժարակամ համա-
 ձայնութեամբ որոշեցինք դիմաւորել Բարձ-
 րութիւնդ, ըստ արժանւոյն, աչքառու եւ
 պատուաւոր թափօրով եւ ընկերակցու-
 թեամբ եկեղեցականներու եւ աշխարհակա-
 նաց աւագանիին։ Սակայն երբ յետոյ լսե-
 ցինք՝ թէ ճամբու նորանոր արգելքներու
 պատճառաւ Եւդոկիայէ վերադարձար Հա-
 յաստան, մեր ուրախութիւնը սուգի փոխ-
 ուեցաւ, եւ տեսանք՝ թէ արժանի չեղանք
 այսպիսի հօր մը այցելութեան, թէպէտ մեր
 տխրութիւնը ամոքուեցաւ մասամբ քաջա-
 ռողջութեանդ աւետիսովը, զոր հազորդեց
 Գեր. Հայ Վարդապետը, Տէր Յովհաննէս
 Պետնարտովիչ, որ մեզի հանդէպ շատ բար-
 եացակամ եղաւ։ Իրմէ խնդրեցինք որ ան-
 ձամբ Բարձրութեանդ լիովին տեղեկացնէ
 այս Եկեղեցւոյն վիճակը եւ իմ գալուստս։
 Արդարեւ Հռոմէն հոս եկայ, Վեհաշուք Տէր,
 ոչ թէ իմ քմահաճոյքովս, այլ երկիցս հրա-
 ւիրուած՝ ժողովրդեան Աւագանիին կողմէ։
 Իսկ հրաւերին պատճառն այս էր. Նահան-
 գիս մէջ բնակող հայերէն ոմանք, մանաւանդ
 ազնուազոյններէն, մոռնալով իրենց եկե-
 ղեցւոյն ծէսը, լատին եկեղեցւոյ ծէսին ան-
 ցան. նաեւ անոնք որ ուղած են իրենք զի-
 րենք Աստուծոյ նուիրել կրօնական ծառա-
 յութեան մէջ, իրենց սեփական եկեղեցիէն